Պատմություն և մշակույթ 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.275

Security Issues of the South Caucasus in the Context of the Israel–Iran Conflict

Eduard Zohrabyan
https://orcid.org/0009-0006-6983-0100
Yerevan State University, Head of the Chair of the History of Armenia's Neighboring Countries, Candidate of Historical Sciences, Associate Professor
eduardzohrabyan@ysu.am

Keywords: South Caucasus, instability, region, historical stage, transit, communications, conflicts, proxy war, geopolitics, realignments, security, ideology.

In the context of contemporary geopolitical and geo-economic realignments, the South Caucasus, with its strategic significance and importance, has become a focal point for the interests of regional players and major power centers. The encounter and intersection of these often conflicting interests, along with opposing stances on the formation of the region's new military-political architecture, render the South Caucasus security complex even more sensitive and fragile. The scientific study of these new realities is of paramount relevance, particularly when analyzed through the prism of the multilayered and fluctuating relations between Iran and Israel.

These two countries, with historical paths spanning millennia, possess distinct political, socio-cultural, and demographic profiles, as well as differing perceptions of the essence of statehood. Their relations have evolved through several historical stages. Iran recognized the State of Israel as early as 1950. Starting in the 1950s, the intelligence services of both countries began to cooperate, and in 1959, they signed a memorandum of understanding regarding cooperation in defense and intelligence. During those years, Israel supported Iran's nuclear programs. After the Islamic Revolution of 1979, their relationship shifted drastically, transforming from the clandestine cooperation of the Pahlavi era into open hostility. This dramatic change was driven by the change of regime in Iran and its new ideological foundations, which were anti-Zionist in nature. In the post-Soviet years, the divergent interests and conflictual interactions of these two key regional actors have posed serious threats not only to the Middle East but also to the countries of the South Caucasus, specifically to the security of the Republic of Armenia.

Հարավային Կովկասի անվտանգային խնդիրները Իրան-Իսրայել հակամարտության համատեքստում

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 275-293

Received: 15.06.2025
Revised: 13.08.2025
Accepted: 19.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Security Issues of the South Caucasus in the Context of the Israel–Iran Conflict

Հարավային Կովկասի անվտանգային խնդիրները Իրան-Իսրայել հակամարտության համատեքստում

Էդուարդ Զոհրաբյան

ԵՊՀ, Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, պ.գ. թ., դոցենտ

Հիմնաբառեր՝ Հարավային Կովկաս, անկայունություն, տարածաշրջան, պատմափուլ, տարանցիկ, հաղորդակցություն, հակամարտություններ, պրոքսի պատերազմ, աշխարհաքաղաքականություն, վերադասավորումներ, անվտանգություն, գաղափարախոսություն։

Ժամանակակից աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական վերադասավորումների պայմաններում Հարավային Կովկասը իր ռազմավարական նշանակությամբ և կարևորությամբ հայտնվել է տարածաշրջանային խաղացողների և ուժային խոշոր կենտրոնների հետաքրքրությունների կիզակետում։ Այդ շահերի հաճախ իրարամերժ հանդիպադրումը և խաչաձևումը, տարածաշրջանի ռազմաքաղաքական նոր ճարտարապետության ձևավորման հակադիր դիրքորոշումները էլ ավելի զգայուն ու փխրուն են դարձնում Հարավային Կովկասի անվտանգային համալիրը։ Այս նոր իրողությունների գիտական հետազոտությունն ունի արդիական նշանակություն՝ մասնավորապես քննարկելով այն Իրանի և Իսրայելի միջև բազմաշերտ, վայրիվերումներով զարգացող հարաբերությունների դիտանկյունից։

Հազարամյակների պատմական ուղի անցած երկու երկրներն ունեն խիստ հատկագծվող տարբեր քաղաքական, սոցիալ-մշակութային, ժողովրդագրական նկարագիր, պետականության բովանդակության ընկալումներ։ Այդ հարաբերություններն անցել են պատմական մի քանի պատմափուլեր։ Իրանը ճանաչել է Իսրայել պետությունը դեռ 1950 թ.։ 1950-ականներից երկու երկրների հետախուզական ծառայությունները սկսել են համագործակցել և 1959 թ. ստորագրել են պաշտպանության և և հետախուզության ոլորտում համագործակցության հուշագիր։ Իսրայելն այդ տարիներին աջակցում էր Իրանի միջուկային ծրագրերին։ 1979 թվականի Իսլամական հեղափոխությունից հետո նրանց հարաբերությունները կտրուկ փոխվել են՝ գաղտնի համագործակցությունից, որը տեղի է ունեցել Փահլավիների դարաշրջանում, վերածվելով բացահայտ թշնամանքի։ Այս դրամատիկ փոփոխությունը պայմանավորված էր Իրանի ռեժիմի փոփոխությամբ և նրա նոր գաղափարախոսական հիմքերով, որոնք հակասիոնիստական բնույթ էին կրում։ Հետխորհրդային տարիներին տարածաշրջանային այդ երկու կարևոր դերակատարների տարամետ շահերն ու հակամարտ փոխհարաբերությունները լուրջ սպառնալիքներ են ստեղծում ոչ միայն Մերձավոր Արևելքի, այլ նաև Հարավային Կովկասի երկրների, մասնավորապես ՀՀ անվտանգության համար։

Проблемы безопасности Южного Кавказа в контексте конфликта Израиль–Иран

Эдуард Зограбян

Ереванский государственный университет, Заведующий кафедрой истории сопредельных с Арменией стран, Кандидат исторических наук, доцент

Ключевые слова: Южный Кавказ, нестабильность, регион, исторический этап, транзит, коммуникации, конфликты, прокси-война, геополитика, перегруппировка сил, безопасность, идеология.

В условиях современных геополитических и геоэкономических трансформаций Южный Кавказ, благодаря своему стратегическому значению, оказался в центре интересов региональных игроков и крупных центров силы. Столкновение и пересечение этих зачастую взаимоисключающих интересов, а также противоположные позиции по формированию новой военно-политической архитектуры региона делают комплекс безопасности Южного Кавказа еще более чувствительным и хрупким. Научное исследование этих новых реалий имеет актуальное значение, в частности, при рассмотрении их сквозь призму многослойных и нестабильных отношений между Ираном и Израилем.

Две страны, прошедшие исторический путь в несколько тысячелетий, обладают ярко выраженными различиями в политическом, социокультурном и демографическом облике, а также в восприятии сути государственности. Их взаимоотношения прошли через несколько исторических этапов. Иран признал государство Израиль еще в 1950 году. С 1950-х годов спецслужбы двух стран начали сотрудничать, а в 1959 году подписали меморандум о взаимодействии в сфере обороны и разведки. В те годы Израиль поддерживал ядерные программы Ирана. После Исламской революции 1979 года их отношения резко изменились: тайное сотрудничество эпохи Пехлеви сменилось открытой враждой. Это драматическое изменение было обусловлено сменой режима в Иране и его новыми идеологическими основами, носившими антисионистский характер. В постсоветские годы расходящиеся интересы и конфликтные отношения этих двух важных региональных акторов создают серьезные угрозы безопасности не только Ближнего Востока, но и стран Южного Кавказа, в частности Республики Армения.

* * *

Ներածություն: Հարավային Կովկասը, իր աշխարհագրական դիրքի, հաղորդակցության ուղիների, բնական հարուստ ռեսուրսների առկայությամբ պատմության բոլոր փուլերում ունեցել է ռազմավարական կարևոր նշանակություն: Այն պատմականորեն, գտնվելով Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում՝ նաև քաղաքակրթական փոխազդեցությունների ինքնատիպ մի տարածաշրջան է եղել: Տարածաշրջանի աշխարհագրական դիրքը, որը կամուրջ է Արևելքի և Արևմուտքի միջև, այն դարձրել է ոչ միայն ռազմավարական նշանակության, այլև պատմականորեն մշտական պայքարի և անկայունության գոտի: Տարածաշրջանը դարեր շարունակ գտնվել է տարբեր կայսրությունների՝ Պարսկական, Օսմանյան և Ռուսական, ազդեցության տակ, ինչը իր դրոշմն է թողել ինչպես տարածաշրջանի էթնիկ-ազգային ներքին կառուցվածքի, այնպես էլ արտաքին հարաբերությունների վրա: Հարավային Կովկասն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ մշտապես հանդիսացել է նաև եվրասիական հաղորդակցային ենթակառուցվածքների հիմնական ուղիներից ու առանցքային քաղաքական-տնտեսական հանգույցներից մեկը [Մելքոնյան Ռ., Գեղամյան Վ., 2025, 19]: Արդի ժամանակներում Հարավային Կովկասը վերածվել է մրցակցային տարածաշրջանի և կարևոր դեր է խաղում համաշխարհային էներգետիկ տարանցման և

աշխարհաքաղաքական նոր վերադասավորումների իրողություններում: Այստեղ, ինչպես և նախորդ դարերում, ներկայումս էլ խաչաձևվում են թե՛ տարածաշրջանային և թե՛ արտատարածաշրջանային խաղացողների շահերն ու հետաքրքրությունները: Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգային խնդիրների վրա ազդեցության դիտանկյունից առանցքային նշանակություն է ձեռք բերում ԻԻՀ և Իսրայելի միջև հարաբերությունների քննական վերլուծությունը: Այդ համատեքստում հրատապ է դիտարկել նաև ՀՀ-Իսրայել հարաբերությունները՝ լծորդելով այն տարածաշրջանային շարժընթացների բազմաշերտ ու բազմաբարդ իրողություններին:

1.Հարավային Կովկասի անվտանգային խնդիրները աշխարհաքաղաքական նոր իրողություններում: Հարավային Կովկասը իր բազմէթնիկ-ազգային, բազմամշակութային, քաղաքակրթական արժեքային համակարգերով, արտաքին քաղաքական տարբեր գերակայություններով բարդ խճանկար ունեցող մի տարածաշրջան է: Նրա անվտանգային միջավայրը բազմաշերտ է և բնութագրվում է մի շարք փոխկապակցված մարտահրավերներով: Դրանցից առավել նշանակալի է էթնիկական հիմքի վրա ծագած տարածքային հակամարտությունների առկայությունը: Արցախյան հակամարտությունը, որն իրականում միջազգային հանրահռչակ՝ ազգերի ինքնորոշման և արցախահայության սահմանադրական իրավունքի հիման վրա իրականացված դասական օրինակ է, ձևախեղված ներկայացվում է, որ այն «արմատացած է պատմական տարածքային պահանջներում և էթնիկական լարվածության մեջ, շարունակում է մնալ տարածաշրջանային անկայունության գլխավոր խոչընդոտը» [Changing Geopolitics of the South Caucasus after the Second Karabakh War]:

Ավելի քան մեկ հարյուրամյակ պատմություն ունեցող արցախյան հակամարտությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ այն Ադրբեջանի ավանդական ռազմածավալապաշտական ձգտումների շնորհիվ ենթարկվել է հարկադիր փոխակերպման և հանգուցալուծվել է անավարտ խաղաղությամբ, հակամարտող կողմերից մեկի վերացմամբ:

2020-2023 թվականների պատերազմները, չնայած Ադրբեջանի ռազմական հաջողություններին, դեռևս չեն վերացրել հակամարտության հիմքում ընկած խնդիրները և հանգեցրել են զգալի մարդկային ներուժի և բնակչության տեղահանման:

Հակամարտության շուրջ պահպանվող անորոշությունը և երկարաժամկետ խաղաղության պայմանագրի բացակայությունը պահպանում են լարվածության և նոր բախումների ներուժը: Ավելորդ չէ նկատել, որ Ադրբեջանը, ոգևորված 44-օրյա պատերազմում Արցախի նկատմամբ կոլեկտիվ (Թուրքիայի, Իսրայելի, Պակիստանի, Սիրիայից բերված ահաբեկչական խմբերի մասնակցությամբ) հաղթանակից, հետո ՀՀ-ի հետ հարաբերություններում ակնհայտորեն որդեգրել է հարկադրական դիվանագիտության մեթոդները, որի շնորհիվ ձգտում է առավելագույն ձեռքբերումներ արձանագրել Ադրբեջանի համար, ըստ որում նաև ՀՀ սուվերեն տարածքների հաշվին: Սա Ադրբեջանի կողմից ուժի դիրքերից գործելու դասական մոտեցում է, որի առջև նահանջում և անկում է ապրում միջազգային իրավունքը:

Այս հակամարտությունը Հարավային Կովկասում միակը չէ: Լարվածությունը պահպանվում է նաև Վրաստանում՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի շուրջ, որոնք նույնպես ծագել են Խորհրդային Միության փլուզումից հետո [South Caucasus, in the shadow of Ukraine]:

2008 թվականի վրաց-օսական պատերազմից հետո Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը, ինչը լարվածություն առաջացրեց տարածաշրջանում:

Միջազգային հանրությունը, բացառությամբ մի քանի պետությունների [Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը ճանաչել են ՌԴ-ն, Վենեսուելան, Նիկարագուան, Նաուրու և Տուվալու երկրները]:, չի ճանաչում այս տարածքների անկախությունը: Վրաստանը շարունակում է ջանքեր գործադրել այս տարածքների նկատմամբ վերահսկողությունը վերականգնելու համար, սակայն առկա իրավիճակը պահպանում է տարածաշրջանային անկայունությունը [The Geopolitical Gordian Knot of the South Caucasus]:

Ռուսաստանի ռազմական ներկայությունը այս տարածքներում վրաց հանրության մի մասի կողմից շարունակում է դիտարկվել որպես Վրաստանի ինքնիշխանության և եվրաատլանտյան ձգտումների խոչընդոտ: Շարունակվող ռուս ուկրաինական պատերազմը նոր ճշգրտումներ կատարեց Վրաստանի Հանրապետության ներհանրույթային կյանքում: Վրաց իշխանություններն ու հասարակության մի ստվար զանգվածը ներկայումս առավել զգուշավոր և հավասարակշռված վարքագիծ են որդեգրել ՌԴ և Եվրոպայի հետ հարաբերություններում:

Տարածաշրջանային խոշոր խաղացողները՝ Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը, ունեն իրենց ազդեցության գոտիները և մրցակցում են տարածաշրջանում իրենց դիրքերը ամրապնդելու համար: Ռուսաստանը, որը պատմականորեն գերիշխող դեր է ունեցել Հարավային Կովկասում, ձգտում է պահպանել իր ազդեցությունը և խոչընդոտել այլ արտաքին ուժերի ներգրավվածությունը: Թուրքիան, որը ռազմավարական դաշնակից է Ադրբեջանի հետ, ավելի ու ավելի է հավակնում տարածաշրջանային ազդեցության [Changing Geopolitics of the South Caucasus after the Second Karabakh War]: Իրանը սահմանակից լինելով Ադրբեջանին և Հայաստանին, հետաքրքրված է տարածաշրջանային հավասարակշռությունը պահպանելով և իր մրցակիցների ազդեցությունը զսպելով: Այս երեք տերությունների մրցակցությունը մշտական սպառնալիք է Հարավային Կովկասում լարվածության աճի և տեղական հակամարտությունների սրման համար:

Չկարգավորված և փոխակերպված հակամարտությունները, ինչպես նաև անավարտ խաղաղությունը տարածաշրջանում պահպանում են անվտանգության դեֆիցիտը և խոչընդոտում տարածաշրջանային ինտեգրացիան և տնտեսական առաջընթացը: Շարունակվող թշնամանքը շեղում է ռեսուրսները և ուշադրությունը կայուն զարգացման և տարածաշրջանային համարկման ջանքերից: Հյուսիսային Կովկասում նկատվում է կազմակերպված հանցավորության աճ և ռադիկալ գաղափարախոսությունների տարածում, որոնք պայմանավորված են աղքատությամբ և գործազրկությամբ:

Հասարակական կայունության և արդյունավետ կառավարման համար լուրջ սպառնալիք են հանցավորության և քաղաքական բռնության միահյուսումը: Հարավային Կովկասը, լինելով տարանցիկ տարածաշրջան, նույնպես ենթակա է այս խնդիրների ազդեցությանը, հատկապես հաշվի առնելով Ռուսաստանի դեմ սահմանված պատժամիջոցների շրջանցման համար տարածաշրջանի հանգույց դառնալու հնարավորությունը [Geopolitics and illicit economies in the South Caucasus]:

Տարածաշրջանում առկա են խորը արմատներ ունեցող էթնիկական և ազգային լարվածություններ: Արտաքին ազդեցությունները և պատմական դժգոհությունները էլ ավելի են բարդացնում միջէթնիկական հարաբերությունները, որոնք ցանկացած պահի կարող են վերածվել

բռնության: Ժողովրդավարական արժեքների ու գաղափարների դեռևս չմարսվածությունը, հարավկովկասյան պետությունների կայացման գործընթացում արձանագրում են լուրջ գաղափարաքաղաքական, սոցիալ-տնտեսական ձևախեղումներ: Ազգային փոքրամասնությունների իրավունքների հարգման խնդիրները դեռևս լիովին լուծված չեն:

Տնտեսական անկայունությունը և արտաքին տնտեսական ցնցումների խոցելիությունը նվազեցնում են պետությունների դիմադրողականությունը ներքին և արտաքին սպառնալիքների նկատմամբ: Հարավային Կովկասի երեք պետությունները՝ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը, բախվում են կառավարման փխրուն կառույցների և կոռուպցիայի հետ կապված խնդիրների: Պետական վերահսկողության թուլությունը տարածքների նկատմամբ, օրենքի գերակայության և հանրային ծառայությունների մատուցման խոչընդոտները, կոռուպցիան և անարդյունավետ կառավարումը խարխլում են պետական ինստիտուտները և դժվարացնում կայուն զարգացումը: Կոռուպցիան, հատկապես կառավարման ստորին օղակներում, շարունակում է մնալ լուրջ խնդիր: Թույլ կառավարումը և կոռուպցիան ստեղծում են անկայունության և արտաքին միջամտության համար բարենպաստ միջավայր:

Հետխորհրդային տարիներին Հարավային Կովկասի բոլոր երկրներում կոռուպցիան տարածված երևույթ է, որն էական ազդեցություն է ունեցել այդ երկրների ինչպես տնտեսական և ներքաղաղաքական կյանքի, այնպես էլ արտաքին հարաբերությունների և անվտանգության համար: Դրա մասին են վկայում Վրաստանում և Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագրերի առկայությունը և հակակոռուպցիոն քննչական մարմինների ստեղծումը: Դեռևս 2003 թ. նոյեմբերի 6-ին ՀՀ կառավարության թիվ 1522-Ն որոշմամբ հաստատվեց ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների 2003-2007 թթ. ծրագիրը, որը սահմանում էր կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը: 2013 թ. մայիսի 16-ին թիվ 515-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրում որպես գործունեության հիմնական ուղղություն կարևորվում էր կոռուպցիայի դեմ պայքարը: Սա նշանակում էր, որ կոռուպցիան շարունական բնույթ էր կրում:

Կոռուպցիայի նեկրոֆիլ դրսևորումները ոչ միայն արգելապատնեշ են պետության սոցիալ-տնտեսական առաջընթացի ճանապարհին և ձևավորում են անվստահություն իշխանությունների նկատմամբ ու ներհանրույթային լարված մթնոլորտ, այլև երկիրը դարձնում են էապես խոցելի, պարարտ հող ստեղծելով արտաքին ուժերի միջամտության համար:

Չնայած ձեռնարկված քայլերին և՛ Հայաստանի և՛ Վրաստանի հանրապետություններում կոռուպցիան այնուամենայնիվ առկա է:

Ադրբեջանում ներքաղաքական իրադրության բարձր լարվածությունը պայմանավորված է ինչպես այդ հանրապետության կոռումպացվածության բարձր աստիճանով, այնպես էլ քաղաքական ընդդիմության նկատմամբ կիրառվող բռնություններով: Ներկայումս Ադրբեջանում հաշվվում է մոտ 450 քաղբանտարկյալ:

Կոռուպցիան Ադրբեջանում այլևս կրում է համակարգային բնույթ, որն ընդգրկել է ամբողջ հասարակական կյանքը: Դեռևս 2000-ականների սկզբներին Ադրբեջանի բնակչության շրջանում անցկացված սոցհարցումների մասնակիցների 80 %-ը գտնում է, որ Ադրբեջանը դասվում է կոռուպցիոն ամենաբարձր մակարդակ ունեցող երկրների շարքին: Կոռուպցիան

լայնորեն ընդգրկել է այդ հասարակության բոլոր՝ մասնավորապես իրավապահ (պետավտոտեսչության, ոստիկանության, դատախազության, դատարանի), մաքսային ծառայության, հարկային ծառայության և ունեցվածքի Պետկոմիտեի, տեղական ինքնակառավարման, պետական կենտրոնական իշխանության և կառավարման, պաշտպանության, առողջապահության, (10-ից 9,41-8,02 միավոր), սոցապահովագրության, կրթության(7,46-7,22 միավոր) ոլորտները [Мусабеков Р., 2000, 111-114]: Պետական իշխանությունը ոչ միայն չի կանխարգելում կոռուպցիան, այլ ինքը վերածվել է կոռուպցիան ինստիտուցիոնալացնող մարմնի [Мусабеков Р., 2000, 118]:

Հարավային Կովկասի անվտանգային մարտահրավերները փոխկապակցված են և կազմում են տարածաշրջանային անվտանգության բարդ համալիր: Անվտանգության սպառնալիքները օբյեկտիվ իրականություն չեն, այլ սուբյեկտիվ դրսևորումներ: Տարածաշրջանի պետությունները կիսում են սպառնալիքների ընդհանուր ընկալումը, որի հիման վրա ձևավորում է նրանց վարքագիծը և փոխազդեցությունները:

Տարածաշրջանային անվտանգության համալիրի անարխիկ կառուցվածքը, որտեղ բացակայում է կանոններն ու վեճերը կարգավորող գերագույն իշխանությունը, հանգեցնում է լարվածության և հակամարտությունների:

Անվտանգության ընդհանուր շարժընթացը կազմող բաղադրիչները՝ զինված ուժերի մրցավազքը, դաշինքների ձևավորումը և հակամարտությունների սրումը ստեղծում են անվտանգության պակասի ինքնափոխանցող շրջան: Այն հատկանշական է տարածաշրջանի բոլոր պետություններին: Այս բոլոր գործոնները միասին վերցրած ձևավորում են Հարավային Կովկասի անվտանգային բարդ և անկայուն միջավայրը:

2.Իրան-Իսրայել մրցակցությունը. Տարածաշրջանային աշխարհաքաղաքականության վերլուծություն: Իրանի և Իսրայելի միջև հարաբերությունների պատմությունը բարդ է և անցել է մի քանի փուլերով: Իրան և Իսրայելը հազարամյա պատմություն ունեցող երկու ժողովուրդների հանգրվան դարձած պետություններ, որոնք ծայրահեղ կերպով տարբերվում են թե՛ քաղաքական թե՛ սոցիալ-մշակութային, թե ժողովրդագրական, թե՛ պետության և պետականության բնութագրիչների հարթություններում [Խալաֆյան, 2017, 1]:

Շահ Մոհամադ Ռեզա Փեհլևի գահակալության շրջանում՝ 1950 թ. Իրանի կողմից Իսրայելի անկախության դե-ֆակտո ճանաչումից հետո երկու երկրների միջև հաստատվել էին քաղաքական, ռազմական, տնտեսական սերտ համագործակցություն: Փահլավիների դարաշրջանում երկու երկրները գաղտնի համագործակցում էին՝ հիմքը ծայրամասային դոկտրինի և արաբական ազգայնականության ու խորհրդային ազդեցության վերաբերյալ ընդհանուր մտահոգություններն էին: Իսրայելը Իրանին դիտարկում էր որպես բնական դաշնակից՝ հաշվի առնելով նրա ոչ արաբական ինքնությունը և արաբական աշխարհի եզրին գտնվելը: Երկու երկրները սերտ կապեր էին հաստատել, այդ թվում՝ հետախուզական տվյալների փոխանակում, ռազմական օգնություն և տնտեսական համագործակցություն, ինչպես նաև նավթի մատակարարում:

Ինչպես ճիշտ դիտարկում է վերլուծաբան Ն. Խալաֆյանը «թե՛ Իրանը, թե՛ Իսրայելը էտատիկ սկզբունքներ որդեգրած և իրատեսական հայեցակարգի կիրառական քաղաքականությամբ առաջներդվող պետություններ են: Երկուսին էլ ուղեկցում է

հասարակական մակարդակում պետական և ազգային շահերի համակցության գիտակցմամբ օժանդակվող քաղաքական պրագմատիզմը, ինչն իր արտահայտումն է գտնում թե լոկալ, տարածաշրջանային և թե գլոբալ խնդիրների պարագայում, երկուսն էլ ունեն խիստ յուրատեսակ, տարիների ընթացքում կոփված և իր արդյունավետությունն ապացուցած քաղաքական մշակույթ» [Խալաֆյան, 2017, 1]:

Թերևս սրանով է պայմանավորված, որ 1979 թվականի Իսլամական հեղափոխությունից և Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումից հետո կտրուկ շրջադարձ տեղի ունեցավ երկու երկրների փոխհարաբերություններում: Դրանք թևակոխեցին նոր՝ անզիջում պայքարի փուլ: Երկու երկրների իշխանությունները պաշտոնական հայտարարություններով հանդես եկան ոպես միմյանց գլխավոր հակառակորդ՝ ավելին թշնամի պետություններ: Իրանի նոր իշխանությունները որդեգրեցին հակաիմպերիալիստական և հակասիոնիստական գաղափարախոսություն, որը հանգեցրեց Իսրայելի հետ դիվանագիտական կապերի խզմանը և թշնամական դիրքորոշմանը: Այաթոլլահ Խոմեյնին Իսրայելը հայտարարեց «իսլամի թշնամի» և «Փոքր Սատանա»: Իրանի հետհեղափոխական գաղափարախոսությունը, որը հիմնված է հակաիմպերիալիզմի և հակասիոնիզմի սկզբունքների վրա, խորացրեց թշնամանքը երկու երկրների միջև [Shifting Sands: From Alliance to Adversity Tracing Iranian-Israeli Relations before the Islamic Revolution and Envisioning Futur]: Իրանի ներկայիս կառավարությունը չի ճանաչում Իսրայելի լեգիտիմությունը և պահանջում է նրա «վերացումը Մերձավոր Արևելքի քարտեզից»: Իրանը Պաղեստինը համարում է պատմական Պաղեստինի տարածքի միակ լեգիտիմ պետությունը:

Իսրայելն իր հերթին Իրանին դիտարկում է որպես Մերձավոր Արևելքի կայունությանը սպառնացող վտանգ և մեղադրում է նրան ցեղասպանական մտադրություններ ունենալու մեջ: Իսրայելը խիստ մտահոգված է Իրանի միջուկային ծրագրով և նրա աջակցությամբ հակաիսրայելական խմբավորումներին, ինչպիսիք են «Հեզբոլլահը» Լիբանանում և «Համասն» ու «Պաղեստինյան Իսլամական Ջիհադը» Գազայի հատվածում: Իսրայելը ձգտում է պահպանել իր որակական ռազմական առավելությունը տարածաշրջանում՝ ներառյալ Իրանի և նրա դաշնակիցների դեմ: Իրանի հեղափոխական գաղափարախոսությունը, որն աներկբայորեն մերժում է Իսրայելի գոյությունը, և Իրանի՝ որպես մուսուլմանական աշխարհի առաջնորդի և Մերձավոր Արևելքում կենսական ուժի հավակնությունները, էլ ավելի են խորացնում հակամարտությունը:

Իրանի և Իսրայելի միջև մրցակցությունը դրսևորվում է տարբեր ձևերով: Դրանցից մեկը պրոքսի պատերազմն է և ոչ պետական դերակատարների աջակցությունը: Իրանը աջակցում է Լիբանանի «Հեզբոլլահ», Պաղեստինի «Համաս» շարժումներին և «Պաղեստինյան Իսլամական Ջիհադին» (ՊԻՋ) Գազայի հատվածում: Պաշտոնական Վաշինգտոնի տվյալներով՝ Թեհրանը տարեկան շուրջ 1մլրդ ԱՄՆ դոլար է հատկացնում Հեզբոլլահ (700 մլն ԱՄՆ դոլար), Համաս (100 մլն ԱՄՆ դոլար՝ ներառյալ պաղեստինյան այլ զինյալ խմբավորումները) և Մերձավոր Արևելքում գործող այլ զինյալ խմբավորումներին: Ամերիկյան կողմի հավաստիացմամբ, Հեզբոլլահ, Համաս և այլ զինյալ խմբավորումների ռազմական գործողությունների ուղղորդման , կազմակերպման հարցում զգալի է մասնավորապես Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) դերը: Աղբյուրի փոխանցմամբ, այդ ֆինանսական

միջոցներով Հեզբոլլահը Լիբանանում տիրապետում է շուրջ 100 հազ. հրթիռների [Վերանյան Կ., Իրան-Իսրայել միջնորդավորված պատերազմը]:

ՊԻՋ-ին 2016 թեհրանը հատկացրել է 70 մլն ԱՄՆ դոլար: Վաշինգտոնը քննադատում է Սիրիայի իշխանություններին ՊԻՋ-ին երկրի տարածքում ազատ գործելու հնարավորություն ընձեռելու համար [Վերանյան Կ., Իրան-Իսրայել միջնորդավորված պատերազմը]:

Կան նաև տեղեկություններ Իրաքում շիա զինված խմբավորումներին և Եմենում հութիներին Իրանի աջակցության մասին: Իսրայելն իր հերթին ռազմական գործողություններ է իրականացնում Սիրիայում՝ ուղղված Իրանի դաշնակիցների և զենքի փոխադրումների դեմ: Պրոքսի պատերազմը թույլ է տալիս երկու կողմերին ներգրավվել հակամարտության մեջ առանց ուղիղ, լայնածավալ ռազմական բախումների, սակայն այն ապակայունացնում է բազմաթիվ տարածաշրջաններ:

Իրան-Իսրայել միջնորդավորված դիմակայությունն առանձնանում է նաև հիբրիդային գործողություններով hibrid war, որոնցից կարելի է նշել Իսրայելի վարչապետ Նեթանյահուի ուղերձներն Իրանի ժողովրդին: Ուղերձներում Իրանի ժողովրդին կոչ էր արվում դուրս գալ փողոց և պահանջել Իրանի ղեկավարությունից <<Սիրիայում, Եմենում և Մերձավոր Արևելքի անիմաստ պատերազմներում ֆինանսներ վատնելու փոխարեն, լուծել երկրի առջև կանգնած այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են օդի աղտոտվածությունը, ջրային սակավ ռեսուրսները, ահաբեկչությունը: Կոչ էր արվում նաև ազատվել Իրանի ղեկավարությունից, որտեղ Իսրայելը ներկայացվում էր Իրանի ժողովրդի բարեկամ [Վերանյան Կ., Իրան-Իսրայել միջնորդավորված պատերազմը]:

Ռազմավարական մրցակցությունը տարածաշրջանային ազդեցության և միջուկային հավակնությունների շուրջ նույնպես հակամարտության կարևոր բաղադրիչը է: Իսրայելը խիստ դեմ է Իրանի միջուկային ծրագրին և ջանքեր է գործադրում կանխելու Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերումը՝ ներառյալ գաղտնի գործողությունները և հնարավոր ռազմական հարվածները : Իրանը պնդում է, որ իր միջուկային ծրագիրը խաղաղ նպատակներ է հետապնդում, սակայն Իսրայելը և նրա դաշնակիցները մտավախություն ունեն, որ այն կարող է ռազմականացվել [The long history between Israel and Iran – NPR]: Իրանի՝ միջուկային շեմին հասնելու հնարավորությունը մեծացնում է ռազմական էսկալացիայի ռիսկը:

Իրանի և Իսրայելի միջև հակամարտությունը ներառում է նաև ուղիղ և անուղղակի բախումներ, այդ թվում՝ կիբերհարձակումներ, դիվերսիաներ, միջուկային գիտնականների և ռազմական հրամանատարների սպանություններ, ինչպես նաև 2024 թվականին տեղի ունեցած հրթիռային փոխհրաձգությունը:

2024 թվականին տեղի ունեցած ուղիղ բախումը վկայում է Իրան-Իսրայել հարաբերությունների վտանգավոր շրջադարձի մասին: Իրանի կողմից Իսրայելի ուղղությամբ հրթիռային և անօդաչու թռչող սարքերի հարձակումը և Իսրայելի պատասխան հարվածը Իրանի տարածքին ցույց են տալիս հակամարտության աճող վտանգավորությունը:

Իսրայելը Իրանի միջուկային ծրագրի շուրջ ծավալված միջազգային ճգնաժամի գլխավոր դերակատարներից մեկն է, որ հանդես է գալիս կոշտ դիրքորոշմամբ: Իրաքի պատերազմին հաջորդած տարիներին Իսրայելը ԱՄՆ-ի հետ միասին դարձավ հակաիրանական կոալիցիա ձևավորելու ջատագովը:

Իրանի իշխանությունները ամեն գնով փորձում են հակադարձել Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի և իր գլխավոր դաշնակից Իսրայելի քաղաքականությանը, պարբերաբար իսրայելական կողմին մեղադրում է ԻԻՀ-ում ներքաղաքական ճգնաժամ հրահրելու և ազգային փոքրամասնությունների շրջանում անջատողական շարժումները հրահրելու մեջ:

2025 թ. հունիսին Իրանի միջուկային ծրագրի կասեցման շուրջ ընթացող բանակցությունների օրերին Իսրայելը ռմբակոծության ենթարկեց ԻԻՀ տարածքի մի շարք բնակավայրեր, որին ԻԻՀ-ն պատասխանեց զանգվածային հրթիռակոծությամբ:

Իրանի դեմ ԱՄՆ-ի և Իսրայելի ռազմավարության շրջանակներում կարևոր դեր է վերապահվում Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրների, որոնց շարքում առանցքային տեղ է զբաղեցնում Ադրբեջանը:

1991 թ.դեկտեմբերի 25-ին, ըստ Ադրբեջանի ԱԳՆ կայքի, Իսրայելը ճանաչել է Ադրբեջանի անկախությունը, և 1992 թ. ապրիլի 7-ին երկու երկրների միջև հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ: Ադրբեջանի և Իսրայելի միջև ստորագրվել է տարբեր ոլորտներում համագործակցության 13 փաստաթուղթ[Տոնոյան Ա, 2025, 286]: Սկսած, 1990-ական թթ. Ադրբեջանի և Իսրայելի միջև հաստատվել էին ռազմա-քաղաքական և տնտեսական սերտ հարաբերություններ՝ տարիների ընթացքում վերաճելով ռազմավարական գործընկերության: Ուշագրավ է, 2021 թ. «Ջերուսալեմ փոստ» հրեական թերթի գլխավոր քաղաքական թղթակից Գիլ Հոֆմանի հետ զրույցում իսրայելական գաղտնի ծառայության՝ Մոսադի նախկին պետ և Ազգային անվտանգության գծով նախկին (2009-2011 թթ.) խորհրդական Ուզի Արադը[1] նշում էր, որ վերջին 24 տարիների ընթացքում Իսրայելի բանակի ավելի քան 50 հրամանատար ՆԱՏՕ-ի հովանու և Թուրքիայի սերտ համագործակցությամբ իրականացրել են Ադրբեջանի ռազմական կառույցի վերականգնում և կազմակերպում, սպառազինությունների մատակարարում, ԱԹՍ-ների արտադրության գործարանների ստեղծում, կազմակերպվել են 146 մարզումային կուրսեր, ինչպես նաև ամենամյա գաղտնի համատեղ զորավարժություններ Կասպից ծովում, Հարավային Ադրբեջանում և Հայաստանի սահմաններին մոտիկ: Ուզի Արադի վկայությամբ վերջին քսան տարիների ընթացքում ԱՄՆ, Բրիտանիայի և Իսրայելի դեսպանատների միջև Բաքվում հաստատվել էր սերտ համագործակցութուն: Իսրայելցի գործչի հարցազրույցը ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Բաքվի անվտանգությունը մեզ համար նույնքան կարևոր է, որքան Թել Ավիվինը» [«Ազգ» օրաթերթ, թիվ 42, 12-11-2021]:

Հատկանշական են նաև Wikileaks-ի փաստաթղթերում տեղ գտած Իլհամ Ալիևի հետևյալ խոսքերը. «Իսրայելի հետ Ադրբեջանի հարաբերությունները սառցալեռ են հիշեցնում, ավելի խորն են, քան երեւում են» [«Իսրայելի հետ Ադրբեջանի հարաբերությունները սառցալեռ են հիշեցնում, ավելի խորն են, քան երևում են»]:

1990-ական թթ. սկսած Ադրբեջան այցելեցին Իսրայելի տասնյակ բարձրաստիճան պաշտոնյաներ. 1997 թ. և 2016 թ. վարչապետ Բենյամին Նեթանյահուն, 2009 թ. վարչապետ Շիմոն

---

[1]Հարկ է նշել, որ 2021 թ. Յոսի Քոենը ևս բացահայտումներ կատարեց Իրանում իսրայելական հատուկ ծառայությունների գործունեության վերաբերյալ: Экс-глава "Моссада" рассказал о тайных операциях против Ирана https://www.svoboda.org/a/eks-glava-mossada-rasskazal-o-taynyh-operatsiyah-protiv-irana/31303112.html (մուտք՝ 19.11.22)

Պերեսը: Բաքվում ամենաշատ հյուրընկալված օտարերկրյա գործիչներից էր Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը: Իսրայելա-ադրբեջանական հարաբերությունների խորացման գործում մեծ դեր էր խաղում ծնունդով բաքվեցի իսրայելական Կնեսետի անդամ, Իսրայել-Ադրբեջան բարեկամական խմբի ղեկավար Յոզեֆ Շագալը, ով հայտարարում էր, որ Իրանը հասկանում է, թե որքան խորանում են Իսրայել Ադրբեջան հարաբերությունները, այնքան թուլանում է Իրանը [Zamejc A., The Blooming Friendship Between Azerbaijan And Israel]:

Այսպես, Իրանի Իսլամական Հանրապետության միջուկային ծրագրի շուրջ ծավալվող միջազգային գործընթացների, ինչպես նաև Մերձավոր Արևելքում ընթացող զարգացումների համատեքստում Իսրայելի կողմից մեծ կարևորություն էր տրվում Ադրբեջանի իշխանությունների դիրքորոշմանը: Ինչպես արդեն նշվեց, Իրաքի պատերազմին հաջորդած տարիներին լրջագույն հարց դարձավ հակահիրանական կոալիցիա ձևավորելու հարցը, որտեղ որոշակի դեր էր վերապահված նաև Ադրբեջանին:

Ի թիվս այլ հարցերի, լրջագույն գործոն էր դառնում Իրանում ապրող ադրբեջանցիների խնդիրը: Այս հարցը պատմության ընթացքում հաճախ էր դարձել ԽՍՀՄ-ի կողմից շահարկումների թեմա՝ առավել լրջորեն օրակարգում հայտնվելով 1940-ական թթ.:

ԽՍՀՄ փլուզումից հետո Իրանում ապրող ադրբեջանցիների հարցը պարբերաբար հայտնվում էր ԱՄՆ-ի, Թուրքիայի և Իսրայելի ուշադրության կենտրոնում: Իրանական Ադրբեջանում տարբեր տարիներին (1999 թ., 2003 թ., 2006 թ., 2009 թ., 2018 թ. 2022 թ.) ծագած բողոքի ցույցերը և դժգոհությունների ընթացքում իրանական իշխանությունները պարբերաբար հայտարարում էին դրանց դրսից հրահրված լինելու մասին՝ մասնավորապես շեշտելով ԱՄՆ-ի, Թուրքիայի և Իսրայելի գործոնը: Օրինակ 2003 թ. Իրանում ծավալված բողոքի ցույցերի ընթացքում իրանական կողմը մտավախություն ուներ, որ ուսանողական դժգոհությունները կարող են Արևմուտքի համար դառնալ «տրոյական ձի»՝ մանավանդ, որ ԱՄՆ զորքերը տեղակայված էին Իրանի հարևան երկրներում Իրաք, Թուրքիա, Աֆղանստան, իսկ Պակիստանն ու Ադրբեջանը համարվում են հնարավոր դաշնակիցներ [Агаев В., Иран: студенческие волнения привлекают все больше сочувствующих]:

2006 թ. «Իրան» թերթում տպագրված ծաղրանկարի պատճառով Իրանական Ադրբեջանում սկսված բողոքի ցույցերի ետևում, ըստ իրանական իշխանությունների կանգնած էին, ԱՄՆ-ի և Իսրայելի հատուկ ծառայությունները, որոնք աջակցում էին Վաշինգտոնում գտնվող Հարավային Ադրբեջանի ազգային զարթոնք շարժման ղեկավար Մահմուդալի Չեխրաղանլիին [«Ազգ» օրաթերթ, թիվ 42, 30-05-2006]:

2009 թ. ամռանը Իրանում կայացած նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ Մահմուդ Ահմադինեժադը: Նախագահի թեկնածու Միր Հուսեյն Մուսավիի կողմնակիցները կազմակերպեցին բազմահազարանոց ցույցեր, որն ստացավ «կանաչ շարժում» անվանումը: Հերթական անգամ, իրանական կողմը մեղադրեց արտաքին ուժերին Իրանի ներքաղաքական դրությունը ապակայունացնելու փորձ կատարելու մեջ:

2009 թ. սկսեցին լայնորեն շրջանառվել Իսրայելի կողմից Իրանի դեմ հարձակում նախապատրաստելու մասին լուրեր: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևը Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի հետ Մոսկվայում կայացած հանդիպումից հետո հավաստիացրել էր, որ «հրեական պետությունը մտադիր չէ հարձակվել Իրանի վրա»: Սակայն, Իսրայելի փոխարտգործնախարար

Դանի Այալոնը հայտարարում է, որ «Իսրայելը Ռուսաստանին որևէ երաշխիք չի տվել, թե չի գրոհի Իրանի միջուկային կայանքները» [«Ազգ» օրաթերթ, թիվ 170, 2009-09-23]: 2009 թ. Իսրայելի վարչապետ Շիմոն Պերեսի Բաքու կատարած այցից հետո բավական սրվեցին Ադրբեջանի և Իրանի հարաբերությունները: Իսրայելի վարչապետ Շիմոն Պերեսը Բաքվում հայտարարել էր, որ հուսով է, որ Իրանի ներկայիս կառավարությունը «կանհետանա» [«Ազգ» օրաթերթ, թիվ 121, 2009-07-01]:

2018 թ. Իրանում բռնկված ցույցերի նոր ալիքի ընթացքում Իսրայելի վարչապետ Բենյամին Նաթանյաուն իր Թվիթերյան էջում հրապարակեց հատուկ ուղերձ՝ ողջունելով փողոց դուրս եկած Իրանի քաղաքացիներին՝ այսպես բացահայտ ցուցաբերելով իր աջակցությունը հակաիշխանական շարժմանը [Israelis watch closely as Iran protests].

Վերոնշյալ բոլոր իրողությունների դեպքում Իսրայելի դերակատարության վերաբերյալ վկայությունները հիմնավորված չէին իրական փաստերով: Սակայն, 2022 թ. հուլիսին Բաքվում Իսրայելի դեսպան Ջորջ Դիկը Թվիթերյան էջում հրապարակեց իր լուսանկարը՝ «Թավրիզի խորհրդավոր պատմությունը» խորագրով գիրքը ընթերցելիս: Նկարին կից դեսպանը գրում էր, որ ինչքան շատ բան կարող է իմանալ Թավրիզի ադրբեջանական պատմության և մշակույթի մասին այդ հետաքրքրիր գրքի միջոցով [https://twitter.com/georgedeek/status/1549774617061036034]:

2018 թ. սեպտեմբերի 24-ին, Բուլթփոնի՝ Ադրբեջան կատարած այցից մեկ ամիս առաջ, Ադրբեջան էր այցելել Իսրայելի պաշտպանության նախարարը, որը հանդիպումների շարք էր ունեցել Ադրբեջանի նախագահի, պաշտպանության նախարարի և հետախուզության ծառայության ղեկավարի հետ: Ադրբեջանը ոչ միայն զինվում էր և նախապատրաստվում մեծ պատերազմի, այլև զուգահեռաբար խոստումներ էր տալիս թ՛ե Իսրայելին, թ՛ե ԱՄՆ-ին, որ հակաիրանական գործողությունների պարագայում կաջակցի նրանց՝ իր համար ստանալով որոշակի խոստումներ և երաշխիքներ [Իսկանդարյան Գ., 2025, 35]:

2022 թ. հուլիսին երիտասարդ աղջկա՝ Մահսա Ամինիի մահից հետո սկիզբ առան բազմահազարանոց ցույցերը: Իրանական իշխանությունները հայտարարեցին, որ այս ցույցերը հրահրվել են ԱՄՆ-ի և Իսրայելի հատուկ ծառայությունների կողմից: Այս իրադարձությունը առաջինը լուսաբանած լրագրողների կալանավորումից հետո իրանական հատուկ ծառայությունները հայտարարեցին, որ նրանք ԱՄՆ-ի, Իսրայելի, Մեծ Բրիտանիայի հատուկ ծառայությունների կողմից հավաքագրված գործակալներ են [В Иране журналистов, писавших о смерти Амини, обвинили в госизмене]:

2022 թ. հուլիսի 14-ին Յաիր Լապիդը և Ջո Բայդենը Երուսաղեմում ստորագրեցին ռազմավարական գործընկերության հռչակագիր: «Երուսաղեմի հռչակագիրը» փաստում էր, որ ԱՄՆ-ը մտադիր է «համագործակցել այլ գործընկերների հետ Իրանի կողմից ագրեսիայի և ապակայունացնող քայլերի հակազդման համար»:

Իրանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Նասեր Քանանին նշում է, որ «Թիրախը ոչ միայն Իրանն է, այլև արաբական և իսլամական երկրները, որոնք միշտ պետք է ճանաչեն Իսրայելի գերազանցությունը»: Նրա խոսքով՝ «ուստի տարածաշրջանի համար սպառնալիքի հիմնական աղբյուրը միանգամայն պարզ է» [Թեհրանը «Երուսաղեմի հռչակագիրը» գնահատում է որպես Մերձավոր Արևելքի սպառնալիք]:

2022 թ. Իրանը հայտարարեց Իսրայելի օգտին գործող մի քանի գործակալների կալանավորման մասին: Մի քանի ամիս անց իսրայելական կողմը հայտարարեց Թուրքիայում հրեա զբոսաշրջիկների դեմ ահաբեկչություն նախապատրաստող խմբի ձերբակալման մասին [Конфликт Ирана и Израиля затронул Кипр и Азербайджан]:

3. **Հայաստանը Իսրայել-Իրան մրցակցային միջավայրում:** Հայ և հրեա ժողովուրդների կապերն ունեն հազարամյակների պատմություն: Ներկայումս երկու երկրների փոխհարաբերությունների էվոլյուցիան ապացուցում է, որ Իսրայելը, որպես պետություն, առաջնորդվում է բացառապես անվտանգության և շահերի բարձրագույն սկզբունքներով, որտեղ ընդհանուր պատմական կապերն ու արժեքները Հայաստանի հետ մնում են երկրորդական: Իսրայելը 1991 թ.ճանաչել է Հայաստանի անկախությունը, իսկ 1992 թ. նրանց միջև հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ: 2000 թ. ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի Իսրայել այցի շրջանակներում ստորագրվել են առողջապահության և ներդրումների վերաբերյալ համաձայնագրեր: 2019 թ. Հայաստանը հայտարարեց Իսրայելում դեսպանատուն բացելու մտադրության մասին:

Հայաստանի և Իսրայելի միջև առևտրային հարաբերությունների աշխուժացումը համարժեք չի և զգալիորեն զիջում են Իսրայելի և Ադրբեջանի միջև առկա առևտրի ծավալներին: 2023 թվականին Իսրայելի արտահանումը Հայաստան կազմել է 18.7 միլիոն դոլար, որի հիմնական ապրանքներն էին Ադամանդները, մրգային հյութը և թանկարժեք քարերը: Միևնույն ժամանակ, Հայաստանի արտահանումը Իսրայել կազմել է 9.68 միլիոն դոլար, որի հիմնական ապրանքներն էին Ադամանդը, կոշտ ալկոհոլային խմիչքը և սղոցված փայտը:

Չնայած հուսադրող իրողություններին, Իսրայելը երկար տարիներ հրաժարվում էր պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ հիմնականում Թուրքիայի հետ իր ռազմավարական և առևտրային գործընկերության պատճառով: Թուրքիան նախազգուշացրել է, որ Ցեղասպանության ճանաչումը կարող է վնասել իր հարաբերություններին Իսրայելի հետ: Բացի այդ, որոշ իսրայելցիներ պնդում են, որ Հոլոքոստի յուրահատուկ բնույթը թույլ չի տալիս ճանաչել այլ ցեղասպանություններ՝ վախենալով, որ դա կարող է նսեմացնել իրենց սեփական ողբերգությունը:

Այս իրավիճակը փոխվեց 2025 թվականի օգոստոսին, երբ Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուն հայտարարեց, որ ինքը ճանաչում է Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց, Ասորական և Հունական ցեղասպանությունները: Դա այն դեպքում,երբ երկու տարի այդ հայտարարութունից առաջ Իսրայելը և Թուրքիան միասին վճռորոշ դերակատարություն էին ունեցել Ադրբեջանի կողմից արցախահայության ցեղասպանության իրականացման գործում Ըստ էության, այդ հայտարարությունը ռեալիստական հաշվարկի արդյունք էր: Այն հնչեց այն ժամանակ, երբ Իսրայել-Թուրքիա հարաբերությունները կրկին լարվել էին՝ կապված Գազայի պատերազմի հետ: Նեթանյահուի մոտեցումը ցույց է տալիս, որ Ցեղասպանության ճանաչման հարցը, որը Հայաստանի համար ինքնության և արժեքների խնդիր է, Իսրայելի համար մնում է պրագմատիկ գործիք՝ իր շահերին ծառայեցնելու համար:

Իսրայելի քաղաքականությունը Հարավային Կովկասում ունի ռեալիզմի տեսությունից բխող երեք հիմնական բաղադրիչ՝ ռազմավարական նպատակներ, էներգետիկ անվտանգություն և զենքի առևտուր: Ադրբեջանը դարձել է այս ռազմավարության կենտրոնական գործընկերը: Այդ

համատեքստում Իսրայելը Ադրբեջանին դիտարկում է որպես Իրանի զսպման կարևորագույն միջոց, ինչպես նաև առանցքային գործընկեր Իրանին «շրջափակելու» իր ռազմավարության մեջ [Sources of Israel's Policy in the Caucasus Carnegie Endowment for]: Իսրայել-Ադրբեջան դաշինքը, որը թելադրված է Իրանի զսպման, էներգետիկ մատակարարումների և զենքի շուկայի պրագմատիկ շահերով, լիովին համապատասխանում է ռեալիզմի տեսությանը:

Էներգետիկ առումով, Ադրբեջանը Իսրայելի համար նավթի կայուն և հուսալի մատակարար է, ինչը կարևոր է Իսրայելի էներգետիկ անվտանգության համար[Sources of Israel's Policy in the Caucasus Carnegie Endowment for]: Զենքի առևտուրը կազմում է երրորդ հիմնասյունը: Ադրբեջանը դարձել է իսրայելական զենքի խոշորագույն ներմուծողներից մեկը, ընդ որում, վերջին տասնամյակում Ադրբեջանի ռազմական ներմուծումների գրեթե 70%-ը կազմում են իսրայելական արտադրանքները: Այս առևտուրը ոչ միայն ռազմավարական նշանակություն ունի, այլև տնտեսապես շահավետ է Իսրայելի համար՝ խթանելով բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացումը [Why Azerbaijan is important for Israel's security]: Այս դաշինքը ստեղծում է քառակողմ անվտանգային դինամիկա՝ Հայաստան-Իրան-Իսրայել-Ադրբեջան, որտեղ Իսրայել-Ադրբեջան առանցքը ուղղակի անվտանգային սպառնալիք է Հայաստանի համար, իսկ Իրանի՝ որպես Հայաստանի ռազմավարական գործընկերոջ դերը ստեղծում է լարվածություն:

Իսրայելական ռազմական տեխնոլոգիաների կիրառումը 2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում դարձավ վճռորոշ գործոն, որը կանխորոշեց հակամարտության ելքը [The Air and Missile War in Nagorno-Karabakh: Lessons for the]:

Չնայած իսրայելական Aeronautics Defense Systems ընկերության աշխատակիցների կողմից հայկական դիրքերի վրա հարձակվելուց հրաժարվելու և լիցենզիայի կասեցման վերաբերյալ 2017 թվականի դեպքին, զենքի վաճառքը շարունակվել է: Իսրայելական տեխնոլոգիաների կիրառումը պատերազմի ընթացքում դուրս է եկել պարզ առևտրային գործարքների շրջանակից և դարձել է ուղղակի անվտանգային սպառնալիք Հայաստանի համար:

Հայաստանի և Իսրայելի միջև հարաբերությունները, որոնք նկարագրվում էին որպես «ջերմացող», կտրուկ վատթարացան 2020 թվականի սեպտեմբերին՝ Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում: Ի պատասխան Ադրբեջանին Իսրայելի շարունակական ռազմական աջակցության, Հայաստանը հետ կանչեց իր դեսպանին: Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը Իսրայելին մեղադրեց «ցեղասպանության» մեջ՝ մատնանշելով Ադրբեջանին ռազմական օգնությունը: Այս քայլը բացահայտեց հարաբերությունների հիմքում ընկած անվտանգային հակասությունը՝ ռեալիստական շահերը գերակայեցին կոնստրուկտիվիստական արժեքներին:

Հարաբերությունները մասամբ վերականգնվեցին 2021 թվականի դեկտեմբերին: Սակայն նոր լարվածություն առաջացավ 2024 թվականի հունիսի 21-ին, որի առիթը եղավ Պաղեստինի պետականության ճանաչման վերաբերյալ Հայաստանի որոշումը: Պաղեստինի ճանաչումը կարևոր է Հայաստանի՝ դեպի Արևմուտք ուղղված արտաքին քաղաքականության համատեքստում, որը, սակայն, հակասում է Իսրայելի բացարձակ անվտանգության դոկտրինին:

Ռուսաստանի դերի նվազումը Հարավային Կովկասում փոխում է տարածաշրջանային ուժերի բալանսը: Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիան նոր

հնարավորություններ է ստեղծում Իսրայելի հետ հարաբերությունների համար, քանի որ Հայաստանը, դառնալով Իսրայելի ավանդական դաշնակիցների՝ ԱՄՆ-ի և Հունաստանի հետ ավելի սերտ հարաբերությունների մաս [Armenian-Israeli Relations and the Geopolitics of the Middle East], կարող է ավելի հետաքրքիր գործընկեր դառնալ Թել Ավիվի համար:

Թուրքիան, լինելով Ադրբեջանի գլխավոր դաշնակիցը և Իսրայելի նախկին ռազմավարական գործընկերը, ուղղակիորեն ազդում է տարածաշրջանային քաղաքականության վրա՝ Հայոց ցեղասպանության հարցում ճնշում գործադրելով Իսրայելի վրա: Իսրայելի՝ Ադրբեջանի հետ դաշինքը հաճախ մեկնաբանվում է որպես Իսրայել-Թուրքիա-Ադրբեջան եռանկյունու մաս: Այն կարևոր է տարածաշրջանային ռազմավարական շահերը հասկանալու համար:

Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ի մուտքը տարածաշրջան որպես նոր միջնորդ ստեղծում է նոր երկրաբաշխական իրավիճակ: ԱՄՆ-ն ձգտում է «Թուրքիային ներգրավել, Ռուսաստանին թուլացնել և Իրանին մեկուսացնել»՝ Իսրայելին Կովկասին մոտեցնելու նպատակով[U.S. policy in the South Caucasus: Keep Turkey in, Russia down and Iran out]: Այս քաղաքականությունը, որը սերտորեն համահունչ է Իսրայելի և Ադրբեջանի շահերին, կարող է Հայաստանին ներքաշել Իրանի հետ աճող լարվածության մեջ՝ խաթարելով նրա անվտանգությունը:

Իսրայելի և Ադրբեջանի միջև առևտրային ծավալները շատ ավելի մեծ են, որոնք հիմնականում պայմանավորված են նավթի և գենքի առևտրով: Այս տնտեսական անհամաչափությունը հաստատում է, որ Իսրայելի քաղաքականությունը Հարավային Կովկասում պայմանավորված է բացառապես Ադրբեջանի հետ ռազմավարական և տնտեսական շահերով: Հայաստանը, չունենալով այդ նույն ներուժը (էներգիա, աշխարհագրական դիրք Իրանի դեմ), Իսրայելի համար մնում է երկրորդական գործընկեր:

Չնայած առկա մարտահրավերներին, Հայաստան-Իսրայել հարաբերությունների զարգացման համար կան որոշ հնարավորություններ: Հայաստանի կողմից դեպի Արևմուտք կատարվող քաղաքական շրջադարձը կարող է ներդաշնակեցնել նրա դիրքորոշումը Իսրայելի ավանդական դաշնակիցների հետ: Բացի այդ, Հայաստանի տնտեսական ներուժը, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, կարող է հետաքրքիր գործընկեր դարձնել Իսրայելի համար: Հայաստանը Forbes ամսագրի կողմից անվանվել է «Հարավային Կովկասի Սիլիկոնային հովիտ» [Armenian-Israeli Relations and the Geopolitics of the Middle East]: Կրթության, գիտության և մշակույթի ոլորտում առկա համաձայնագրերը կարող են ծառայել որպես հիմք ապագա համագործակցության համար:

Հարաբերությունների հետագա զարգացումը կախված է նրանից, թե արդյոք Իսրայելը կտեսնի Հայաստանին ոչ միայն Ադրբեջանի հետ հակամարտության համատեքստում, այլ որպես ինքնուրույն՝ տնտեսական, քաղաքական և տեխնոլոգիական ներուժով օժտված գործընկեր[Armenian-Israeli Relations and the Geopolitics of the Middle East]:

Չնայած հեռանկարային հնարավորություններին, Հայաստան-Իսրայել հարաբերությունների առջև ծառացած են լուրջ մարտահրավերներ: Հիմնական խոչընդոտները ներառում են Իսրայելի ռազմական աջակցությունը Ադրբեջանին, որը Հայաստանի կողմից դիտվում է որպես թշնամական գործողություն, և Հայաստանի՝ Պաղեստինի պետականության ճանաչումը: Այս մարտահրավերները արտացոլում են ռեալիզմի և կոնստրուկտիվիզմի հիմնական

հակասությունը երկու երկրների արտաքին քաղաքականություններում: Իսրայելը առաջնորդվում է «ուժով և շահով» (ռեալիզմ), մինչդեռ Հայաստանը փորձում է հիմնվել «արժեքների և ինքնության» վրա (կոնստրուկտիվիզմ): Այս հակասությունը կարող է լինել անհաղթահարելի, քանի դեռ տարածաշրջանային անվտանգային դինամիկաները էականորեն չեն փոխվել:

Եզրակացություն: Աշխարհաքաղաքական նոր վերադասավորումների արդյունքում կովկասյան ամբողջ տարածաշրջանում գեներացվել են տարածաշրջանային և արտատարածաշրջանային մի շարք երկների շահերը, որոնք հաճախ հակամարտ են: Դրանց շարքում են նաև Իրանն ու Իսրայելը:

Հարավային Կովկասի անվտանգային խնդիրները և Իրան-Իսրայել հարաբերությունները սերտորեն փոխկապակցված են, դրանք հաճախ հանդես են գալիս միջնորդավորված: Իրան-Իսրայել հակամարտ մրցակցությունը հանդիսանում է տարածաշրջանում առկա բարդ իրավիճակի զգալի ապակայունացնող գործոն:

Իրանի և Իսրայելի միջև թշնամանքը, որը պայմանավորված է խորը գաղափարախոսական տարաձայնություններով և ռազմավարական հակասություններով, դրսևորվում է տարբեր ձևերով՝ պրոքսի պատերազմից մինչև ուղիղ առճակատում, և իր ազդեցությունն է թողնում Հարավային Կովկասի անվտանգային լանդշաֆտի վրա:

Ադրբեջանի սերտ դաշինքը Իսրայելի հետ, որը պայմանավորված է Իրանի կողմից ներկայացվող ընդհանուր սպառնալիքի ընկալմամբ, Իրանի կողմից դիտարկվում է որպես սպառնալիք իր ազգային անվտանգության համար և հանգեցնում է լարվածության աճի և տարածաշրջանային անկայունության:

Հարավային Կովկասի կայունության և անվտանգության ապագան կախված կլինի տարածաշրջանային և արտաքին դերակատարների կողմից կառուցողական երկխոսության և համագործակցության ջանքերից:

Չնայած առկա բազմաթիվ մարտահրավերներին, կան նաև հնարավորություններ տարածաշրջանային համագործակցության և խաղաղության համար, որոնք պահանջում են համատեղ ջանքեր և փոխադարձ հարգանք բոլոր երկրների կողմից:

Իսրայելի քաղաքականությունը Հարավային Կովկասում պայմանավորված է ռեալիստական շահերով՝ Իրանի զսպման, էներգետիկ անվտանգության ապահովման և զենքի շուկայի պահպանման: Այս ռազմավարական նպատակները թույլ են տվել Ադրբեջանի հետ կառուցել ամուր ռազմական դաշինք: Հայաստանի հետ հարաբերությունները, չնայած ընդհանուր պատմական նմանություններին, մնացել են երկրորդական՝ պայմանավորված Իսրայելի կողմից Ադրբեջանին զենքի վաճառքով և Ցեղասպանության ճանաչման հարցում երկիմաստ դիրքորոշմամբ:

Հայաստանի՝ Ռուսաստանից հեռանալու և դեպի Արևմուտք կատարվող շրջադարձը նոր հնարավորություն է ստեղծում հարաբերությունների վերակազմավորման համար: Այնուամենայնիվ, հարաբերությունները շարունակում են մնալ խոցելի, քանի դեռ Իսրայել-Ադրբեջան դաշինքը մնում է հիմնաքարային, իսկ Հայաստանը՝ Իրանի և Ռուսաստանի հետ պահպանում է կառուցողական հարաբերություններ: Վերջիններիս զարգացումը կախված է նրանից, թե արդյոք երկու կողմերը կկարողանան հաշտեցնել պատմական ինքնությունները

(կոնստրուկտիվիզմ) և պրագմատիկ անվտանգային շահերը (ռեալիզմ)՝ ստեղծելով ավելի հավասարակշռված և կառուցողական գործընկերություն:

Գրականության ցանկ

Monographs

Bayburdyan V., Irani patmut'yun, Yerevan 2002.

«Hayastani Hanrapetut'yan teghy yev dery Irani Islamakan Hanrapetut'yan taratsashrjanayin k'aghak'akanut'yan volortum» Hayagitut'yan ardi vichaky yev zargats'man herrankarnery, zekuts'umneri zhoghovatsu, Yerevan 2004.

Iskandaryan G., Hayastan-Iran haraberut'yunnery Hayastani ankakhut'yan dzerrk'berumits' heto (1991-2014 t't'.) Yerevan, 2016 .

Israyelyan A., Iran-Adrbejan haraberut'yunnery k'sanamya patmap'ulum (2003-2023), Yerevan, 2023.

Melk'vonyan R., Geghamyan V., T'urani chanaparhi Haykakan sepy. « Zangezuri mijants'k'i» himnaharts'y, Yerevan, 2025.

Khalif-zade M.,Vneshnaya politika Velikobritanii i yadernaya programma Irana., tstr. 70-76, 2(44) 2006.;

Khalifzade M., Izrail' I Azerbaydzhan: protivodeystviya Iranu, Tsentral'naya Aziya I Kavkaz, Tom 15, Vypusk 3, 2012.

Ivanov S., Irano izrail'skiy koflikt- odin iz glavnykh ugroz mezhdunarodnoy bezopasnosti, Diplomatitseskaya sluzhba, Moskva, N04, 2024.

Musabekov R., Korruptsiya v Azerbaydzhane , Tsentral'naya Aziya i Kavkaz, 1(7).

Yakimova Y., Protsess institutsonalizatsii azebayydzhano-izrail'skikh otnosheniy, Nizhniy Novgorod, 2014.

Ryzhov I., Kharakter vneshnepolititseskoy deyatel'nosti gosudarstva Izrail' v otnoshenii stran tsentral'no Aziatskskogo region (1992-2000 gg.), Nizhnyy Novgorod, 2009.

Articles

Iskandaryan G., Hayastani yev Irani motets'umnery taratsashrjanayin nor martahravernerin, Haravkovkasyan taratsashrjanum uzhayin haraberakts'ut'yan p'vokhakerpumy yev Arts'akhyan 2020 t', paterazmy, Git. Hodvatsneri zhoghovatsu, HH GGA, Yerevan 2025.

Khalafyan N., Israyel yev Iran bazmashert haraberut'yunner, Analitikon, handes mtatsogh yev voch' antarber mardkants' hamar, MARUT, 2017.

Veranyan K., Iran-Israyel mijnordavorvats paterazmy, (https;//orbeli.am/hy/author/50).

Tonoyan A, Adrbejani artak'in k'aghak'akanut'yan himnakan ughghut'yunnery yev arrandznahatkut'yunnery (1991-2023t't'.), Haravkovkasyan taratsashrjanum uzhayin haraberakts'ut'yan p'vokhakerpumy yev Arts'akhyan 2020 t'. paterazmy, Git. Hodvatsneri zhoghovatsu, HH GGA, Yerevan 2025:

Press materials

«Azg» orat'ert', t'iv 170, 2009-09-23

«Azg» orat'ert', t'iv 121, 2009-07-01:

«Azg» orat'ert', t'iv 42, 30-05-2006:
Uzi Arad. «Bak'vi anvtangut'yuny mez hamar nuynk'an karevor e, vork'an T'el Aviviny», «Azg» orat'ert', t'iv 42, 12-11-2021:

Electronic sources

Changing Geopolitics of the South Caucasus after the Second Karabakh War. Prospect for Regional Cooperation and/or Rivalry - Chr. Michelsen Institute, дата последнего обращения: мая 18, 2025, https://www.cmi.no/publications/8911-changing-geopolitics-of-the-south-caucasus-after-the-second-karabakh-war.
The Geopolitical Gordian Knot of the South Caucasus | The EU in ..., дата последнего обращения: мая 18, 2025, https://www.clingendael.org/pub/2023/the-eu-in-the-south-caucasus/1-the-geopolitical-gordian-knot-of-the-south-caucasus/.
South Caucasus, in the shadow of Ukraine - Chr. Michelsen Institute, дата последнего обращения: мая 18, 2025, https://www.cmi.no/news/3185-south-caucasus-in-the-shadow-of-ukraine.
Shifting Sands: From Alliance to Adversity Tracing Iranian-Israeli Relations before the Islamic Revolution and Envisioning Futur, дата последнего обращения: мая 18, 2025, https://www.ojs.pssr.org.pk/journal/article/download/831/648.
The long history between Israel and Iran - NPR, дата последнего обращения: мая 18, 2025, https://www.npr.org/2024/04/21/1246236286/the-long-history-between-israel-and-iran.
Geopolitics and illicit economies in the South Caucasus | Global Initiative, дата последнего обращения: мая 18, 2025, https://globalinitiative.net/analysis/geopolitics-and-illicit-economies-in-the-south-caucasus/.
Israelis watch closely as Iran protests https://p.dw.com/p/2qKxM (մուտք՝ 19.11.22).
Sources of Israel's Policy in the Caucasus Carnegie Endowment for ..., https://carnegieendowment.org/posts/2015/02/sources-of-israels-policy-in-the-caucasus?lang=en (մուտք՝ 31. 08.25).
Why Azerbaijan is important for Israel's security - JNS.org, https://www.jns.org/why-azerbaijan-is-important-for-israels-security/(մուտք՝ 31. 08.25).
The Air and Missile War in Nagorno-Karabakh: Lessons for the ..., https://www.csis.org/analysis/air-and-missile-war-nagorno-karabakh-lessons-future-strike-and-defense(մուտք՝ 31. 08.25).
Armenian-Israeli Relations and the Geopolitics of the Middle East, https://is.cuni.cz/studium/dipl_st/index.php?id=&tid=&do=main&doo=detail&did=266975(մուտք՝ 31. 08.25).
U.S. policy in the South Caucasus: Keep Turkey in, Russia down and Iran out, https://armenianweekly.com/2025/08/11/u-s-policy-in-the-south-caucasus-keep-turkey-in-russia-down-and-iran-out/(մուտք՝ 31. 08.25).
T'ehrany «Yerusaghemi hrrch'akagiry» gnahatum e vorpes Merdzavor Arevelk'i sparrnalik' https://armenpress.am/arm/news/1088323.html (mutk', 19.11.22).
«Israyeli het Adrbejani haraberut'yunnery sarrts'alerr yen hishets'num, aveli khorn yen, k'an yerevum yen» https://azg.am/am/2021052104/ (mutk', 19.11.22).

https://twitter.com/georgedeek/status/1549774617061036034 (mutk‘, 19.11.22).

V Irane zhurnalistok, pisavshikh o smerti Amini, obvinili v gosizmenehttps://www.svoboda.org/a/v-irane-zhurnalistok-pisavshih-o-smerti-mahsy-amini-obvinili-v-gosizmene/32107382.html (mutk‘, 19.11.22).

Konflikt Irana i Izrailya zatronul Kipr i Azerbaydzhan https://www.svoboda.org/a/konflikt-irana-i-izrailya-zatronul-kipr-i-azerbaydzhan/32119209.html (mutk‘, 19.11.22).

Agayev V., Iran: studencheskiye volneniya privlekayut vse bol'she sochuvstvuyushchikh, 13.06.2003 https://p.dw.com/p/3kOy (mutk‘, 19.11.22).